2025

# ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ Կոտայքի մարզ, համայնք՝Աբովյան, Աբովյան ք. 4-րդ միկրոշրջան 15/10

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

# ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ Կոտայքի մարզ, համայնք՝Աբովյան, Աբովյան ք. 4-րդ միկրոշրջան 15/10

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ տնօրեն՝ Վ. Եպիսկոպոսյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2025

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....5
1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն ....5
1.2 Հապավումներ ....5
1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը ....6
1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը ....7
1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) ....10
1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր* ....10
1.5.2 *Նախատեսվող գործունեության բնութագիր* ....11
1.5.3 *Իրավիճակային և գլխավոր հատակագծեր* ....14
1.5.4 *Շինհրապարակի հատակագիծ* ....18
1.5.5 *Ժամանակացույց* ....19
1.5.6 *Ջեռուցման ու օդափոխության համակարգեր* ....20
1.5.7 *Էներգախնայողության միջոցառումներ* ....21
1.5.8 *Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր* ....21
1.5.9 *Էլեկտրամատակարարում* ....22
1.5.10 *Աղմուկ և թրթռում:* ....22
2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ ....26
2.1 Աշխատանքների կատարման սխեմա ....27
Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են ....29
2.2 Շինարարության ժամկետները ....29
2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը ....29
2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները ....31
*Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* ....31
2.5 *Գազամատակարարում* ....32
2.6 *Կանաչապատման աշխատանքներ* ....32
2.6.1 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ* ....34
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ....35
3.1 Կլիման ....38
3.2 Օդային ավազան ....39
3.3 Ջրային ռեսուրսներ ....40
3.4 Հողերի նկարագիրը ....41
3.5 Հողային ռեսուրսներ ....41
3.6 Կենսաբազմազանություն ....41
3.6.1 Բուսական աշխարհ ....42
3.6.2 Կենդանական աշխարհ ....43
3.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ ....43
3.8 Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ ....43
3.9 Թափոնների կառավարում ....45
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ....46
4.1 Ռիսկերի գնահատում ....47
4.2 Արտանետումների աղբյուրները ....48
4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն ....48
4.3.1 *Մթնոլորտային օդ* ....48
4.3.2 *Ջրային ռեսուրսներ* ....48
4.3.3 *Հողային ռեսուրսներ* ....49

4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը*....49
4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ*....50
4.3.6 *Աղմուկ և թրթռում*....51
4.3.7 *Թափոնների կառավարում*....51
4.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*....52
5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ....52
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ....54
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ....58
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....63
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....64

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | **«ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ** |
| Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ | **Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10** |
| Նախատեսվող գործունեության հասցեն՝ | **Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10** |
| Հեռախոս՝ | **+37499994222** |

## 1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում:

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության վերաբերյալ Աբովյան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

***ՀՀ Սահմանադրություն*** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

***«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ*** օրենք (2023թ.) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

***«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք*** ՀՕ-121 (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և

կազմակերպական հիմքերը ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները: ***«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)*** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

***ՀՀ ջրային օրենսգրք 2002թ.*** - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ* ՝ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները.

***«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը*** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

***«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)*** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

***«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք*** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ

վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

***«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք*** (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

***«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք*** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

***«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.***

***«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.***

***«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,***

***«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը***

***«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),*** որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

***ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն*** որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.–ի հուլիսի 31-ի ***«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»*** N 781-Ն որոշում:

*ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն* ***«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող***

*պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:*

*ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:*

*2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,*

*Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,*

*Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իգ» պարբերություն,*

*Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ:*

*ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉ ԳՈՏԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»*

ՀՀ կառավարության 27.05.2015թ.–ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

## 1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

### 1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*

Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված հողատարածքները գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում:

Հողամասի բնութագրեր՝

Կադաստրային ծածկագիրը՝ 07-002-0039-1826

Մակերեսի չափը (հա)՝ 0.39559

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի տարածքում առկա է քանդման ենթակա մանկապարտեզ 1390,47 քմ, անցակետ – 30քմ: Շենքի քանդումը կիրականացվի տեխնիկական միջոցների կիրառմաբ (բացառելով պայթեցման աշխատանքները): Առաջացող շինարարական աղբը կտեղափոխվի տեղականա ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, մոտ 1800խմ:

Հողատարածքի հարևանությամբ գտնվում են հասարակական շինություններ, ենթակայան, հեռավորությունները մոտակա շենք-շինություններից պահպանվում է համաձայն նորմատիվտեխնիկական փաստաթղթերի պահանջներին, մասնավորապես, `

- Բնակելի շենք, 9 հարկ՝ 29մ
- Բնակելի շենք, 9 հարկ՝ 37մ
- Թիվ 7 մանկապարտեզ՝ 30մ
- Քարե ոչ բնակելի շինություն, 2 հարկ՝ 18մ
- Քարե ոչ բնակելի շինություն, 1 հարկ՝ 31մ
- Բնակելի շենք, 9 հարկ՝ 56մ
- Քարե ոչ բնակելի շինություն /ավտոտնակ/ 1 հարկ՝ 13մ
- Քարե ոչ բնակելի շինություն, 1 հարկ՝ 15մ
- Բնակելի շենք, 9 հարկ՝ 28մ
- Քարե բնակելի շինություն 1 հարկ՝ 62մ
- Քարե ոչ բնակելի շինություն, 1 հարկ՝ 23մ
- Բնակելի շենք, 9 հարկ՝ 49մ
- Քարե ոչ բնակելի շինություն /խանութ/, 1 հարկ՝ 48մ
- Քարե ոչ բնակելի շինություն, 1 հարկ՝ 30մ

Բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ պատմամշակութային հուշարձանների տարածքներ առկա չեն, ծառատեսակներ առկա չեն, հետևաբար ծառահատումներ չի նախատեսվում:

Հողամասի ռելեֆը հարթ է, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, հետևաբար հողաբուսաշերտի պահպանման միջոցառումներ չի նախատեսվում:

### 1.5.2 *Նախատեսվող գործունեության բնութագիր*

Նախագծվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքը գտնվում է Կոտայքի մարզ, Աբովյան համայնք 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում: Աշխատանքային նախագիծը իրականացվել է 13.09.2024թ. Աբովյան համայնքի ղեկավարի կողմից տրված N ՆԹ-0381-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա՝ 0,39599 հա (ըստ վկայական N

28032024-07-0054 ) մակերես ունեցող հողամասում: Տարածքում առկա է քանդման ենթակա մոտավորապես 1772.4 մ2 մակերեսով շինություն: Փաթեթում կցված է համայնքի որոշում՝ գույքի գործառնական նշանակության փոփոխության մասին:

Դեպի շենք մեքենաների և մարդկային հոսքերի մոտեցումը նախատեսված է տարածքին հարավից հարող ճանապարհից: Համաձայն գլխավոր հատակագծի կառուցապատումը զբաղեցնում է ընդհանուր հողամասի 36.43%-ը (1441.24 մ2), անջրանցիկ մակերեսը՝ 1.23% (48.60 մ2) , էկոտոմետը ՝ 1.82% (71.86 մ2) կանաչապատումը՝ 60.52%-ը (2394.14 մ2):

Բնակելի շենքը ունի 3 ստորգետնյա և 16 վերգետնյա հարկեր (ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 34 652.26մ2): Ստորգետնյա հարկերում տեղակայված է ավտոկայանատեղին, որը նախատեսված է ընդհանուր թվով 197 մեքենաների կայանման համար ( 65՝ -3 ստորգետնյա հարկում (նիշ -10,80, 2 652.32 մ2 կառուցապատման մակերես), ( 63՝ -2 ստորգետնյա հարկում (նիշ -7,50, 2652.30 մ2 կառուցապատման մակերես), 63՝ -1 ստորգետնյա հարկում (նիշ -4,20, 2652.30 մ2 կառուցապատման մակերես) 6՝ գլխավոր հատակագծում):

Առաջին վերգետնյա հարկը՝ ±0,00 նիշով հասարակական նշանակության է: Այս նիշով է նախատեսված նաև մուտքը դեպի շենքի աստիճանավանդակներ: Սկսված 7,80 նիշից տեղակայված են թվով 15 բնակելի հարկերը ( յուրաքանչյուր հարկի բարձրությունը 3.30 մ է: Շենքում հնարավոր առավելագույն բնակարանների թիվը 282 է:

Աստիճանավանդակի դռները հակահրդեհային են և ինքնափակվող:

Ամբողջ բակային ծածկույթի տակ նախատեսվում է հատուկ միջոցառումների կիրառում 0,9-1,0 ՄՊա ճնշմանը դիմակայելու,անհրաժեշտության դեպքում թույլ տալու հրշեջ մեքենաների և այլ ծանր տեխնիկայի կիրառումը տվյալ տարածքում:

Ավտոկայանատեղիում տեղակայված են հակահրդեհային ռեզերվուարները և պոմպակայանը: Ապահովված է հրդեհաշիջման համակարգով:

Բնակելի շենքի ավտոկայանատեղիի երեք հարկերը (-4,20 նիշ, -7.50 նիշ և -10.80 ) արտակարգ իրավիճակների ժամանակ կարող է ծառայել, որպես ապաստարան: Հարկերում առկա են սանհանգույցներ, ծխահեռացումը առանձնացված է, կա հնարավորություն սեղմ ժամկետներում ապահովել կացության համար անհրաժեշտ պարագաներով: Ինչպես նաև առկա հակահրդեհային բաքերը կարող են ապահովել ջրի պահանջը:

Կառույցի տանիքը նախատեսված է հարթ՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ, կոնստրուկցիաները՝ ե\բ-ից: Շենքում նախատեսված է շանթապաշտպանության համակարգ:

Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրված է 16 վերգետնյա հարկայնություն: Նախագծում ճարտարապետական տեսքից ելնելով հյուսիս արևմտյան հատվածում վերևի հարկում բարձրությունը նախատեսվում է ավելի բարձր իրականացնել դոմինանտ էլեմենտ ստանալու նպատակով:

Շենքի արտաքին տեսքը և ճարտարապետական հորինվածքը հետագա խեղաթյուրումներից զերծ պահելու համար հովացման համակարգերի արտաքին բլոկները նախատեսվում է տեղադրել պատշգամբների կողային պատերին: Կառույցի երեսապատումը մտադրվում է իրականացնել բազալտե և տրավերտինե սալերով:

Համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման նախագծվող օբյեկտը հանդիսանում է IV կատեգորիայի ռիսկայնության և ենթակա է պետական համալիր փորձաքննության: Նախագիծը մշակվել է ՀՀՇՆ IV-11.07.01.2008 (ՄՄՆ 3.02-05.2003), համալիրի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Բնակչության սակավաշարժ խմբերի համար նախատեսված են թեքահարթակներ:

Նախատեսվող համալիրի կոնստրուկտիվ համակարգը նախատեսված է 9 բալ սեյսմոկայունության համար:

Նախագիծը մշակված է ըստ պատվիրատուի առաջադրանքի և համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և նորմատիվտեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Համաշինարարական աշխատանքները կատարել СНиП 3.03.01-87-ով:

Նախագիծը մշակված է համաձայն՝

ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 21-01-2014 ՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

## ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| | | |
|---|---|---|
| ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ | 3 955,84 Մ² | |
| ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 2394.14 Մ²/ | **60.52%** |
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 1 441.24 Մ²/ | **36.43%** |
| ԱՆՋՐԱՆՑԻԿ ՄԱԿԵՐԵՍ | 48.60 Մ²/ | **1.23%** |
| ԷԿՈՏՈՄԵՏ | 71.86 Մ²/ | **1.82%** |

| | |
|---|---|
| ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻԻ ՔԱՆԱԿԸ | 197 |
| ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | 282 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 34 652.26 Մ² |
| ՎԵՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 26 574.84 Մ² |
| ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 7 956.96 Մ² |

### 1.5.3 *Իրավիճակային և գլխավոր հատակագծեր*

**ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000**




ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000

Architecture & design A41 Project

**ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500**

Architecture & design

A41 Project




**ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:200**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ**

| | |
|---|---|
| ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ | 3 955.84 Մ² |
| ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 2 394.14 Մ² **60.52%** |
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 1 441.24 Մ² **36.43%** |
| ԱՆՁՐԱՆՑԻԿ ՄԱԿԵՐԵՍ | 48.60 Մ² **1.23%** |
| ԷԿՈՏՈՄԵՏ | 71.86 Մ² **1.82%** |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 36.25 Մ² |
| ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻԻ ՔԱՆԱԿԸ | 197 |
| ԲԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | 282 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 34 652.26 Մ² |
| ՎԵՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 26 574.84 Մ² |
| ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ | 7 956.96 Մ² |

Architecture & design A41 Project

### 1.5.4 *Շինհրապարակի հատակագիծ*



## 1.5.5 *Ժամանակացույց*

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| ՀՀ | Խումբը | Աշխատանքների անվանումները | Չ.մ. | Ծավալը | Հիմնավորումը | Աշխատատարությունը Նորմա՝ մ-ժամ | Աշխատատարությունը Ընդ. մարդ-հերթ | Հերթափոխների թիվը | Բանվորների թիվը | Տևողությունը, օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Ա | Նախապատրաստական և քանդման աշխատանքներ | | | | | 600 | 1 | 10 | 60 |
| | | Տարածքի ցանկապատում, մասնակի համահարթում, ժամանակավոր կոմունիկացիաների տեղադրում, գոյություն ունեցողների հեռացում կամ վերատեղադրում, շինարարական մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ, վարչատնտեսական և սանիտարահիգիենիկ տարածքների կարգավորում: | | | | | | | | |
| 2 | Բ | Հողային աշխատանքներ | մ³ | 32000,0 | | | 5400 | | 20 | 270 |
| | Գ | Երկաթբետոնե կառուցվածքներ և շարվածք | | | | | | | | |
| 3 | | Հիմքերի նախապատրաստական շերտի իրականացում | մ³ | 300,0 | 11-01-002-04 | 2,5 | 93,75 | 1,5 | 20 | 900 |
| 4 | | Հիմքերի իրականացում | մ³ | 2000,0 | 06.-01-001-22 | 4,76 | 1190,00 | | | |
| 5 | | Ջրամեկուսացման աշխատանքներ | | | | | 200,00 | | | |
| 6 | | Երկաթբետոնե սյուների, կանգնակների իրականացում | մ³ | 1822,0 | 06-01-107-3 | 12,72 | 2896,98 | | | |
| 7 | | Երկաթբետոնե հեծանների իրականացում | մ³ | 4008,0 | 06-01-109-1 | 16,87 | 8451,9 | | | |
| 8 | | Երկաթբետոնե ծածկերի իրականացում | մ³ | 6000,0 | 06-01-110-1 | 8,67 | 6502,5 | | | |
| 9 | | Երկաթբետոնե պատերի և դիափրագմաների իրականացում | մ³ | 3300,0 | 06-01-026-1 | 10,9 | 4496,3 | | | |
| 10 | | Այլ երկաթբետոնե, բետոնե, խամքարաբետոնե աշխատանքներ | | | | | 200,00 | | | |
| 11 | | Շարվածքային աշխատանքներ | | | | | 14400,0 | | 20 | 720 |
| 12 | Դ | Տանիքային աշխատանքներ | | | | | 1800,00 | | 10 | 180 |
| 13 | Ե | Բացվածքների լրացում, հատակներ, ներքին և արտաքին հարդարում | | | | | 36000,0 | | 40 | 900 |
| 14 | Զ | Ինժեներական ցանցեր | | | | | 7200,0 | | 16 | 450 |
| 15 | Է | Բարեկարգում և կանաչապատում | | | | | 1800,0 | | 10 | 180 |
| | | Ընդհանուր | | | | | 91231 | | | 3660 |



### 1.5.6 *Ջեռուցման ու օդափոխության համակարգեր*

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծային փուլի աշխատանքները մշակված են նախագծային առաջադրանքի և մարտարապետական շինարարական գծագրերի հիման վրա, համաձայն գործող նորմերի և կանոնների։

1.CHI | 7.01-96.- «Շինարարական կլիմատոլոգիա»

2.CHEIT / 7.01-95.- «Շինարարական ջերմաֆիզիկա»

3.ՀՀՇՆ IV-12.02.01-2004 - «Ջեռուցում օդափոխություն և օդի լավորակում

Ջեռուցման համար արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը տարվա ցուրտ ժամանակաշրջանի համար՝ ա=-19°C, Ջերմատարը ջուր է՝ T1 -T2 =75°-60°C պարամետրերով: Շենքի ջերմամատակարարումը իրականացվում է յուրաքանչյուր բնակարանի խոհանոցում տեղակայված տուրբո համակարգի 24կՎտ ջերմարտադրողականության գազի կաթսաներից: Կաթսաների տեղը ցույց է տրված հատակագծերի վրա: Ջեռուցման համակարգը երկխողովականի է ներքին բաշխումով, ջերմատարի փակուղային շարժմամբ: Սագիստրալ խողովակները անցնում են հատակի կոնստրուկցիայով: Որպես ջեռուցման սարքեր ընտրվել են արտասահմանյան արտադրության ջեռուցիչներ (H=500մմ): Ջեռուցիչներին մոտեցող արբերիչների վրա տեղադրվում են կարգավորիչ փականներ, իսկ ջեռուցիչի վրա՝ օդահեռացման փական «Մանսկի»: Մեկ սենյականոց բնակարաններում ջեռուցունը իրականացվում է էլեկտրական կոնվեկտորների միջոցով, քանի որ գազաֆիկացում չի թույլատրվում, իսկ տաք ջուրը ստացվում է լոգարանում տեղադրված ջրատաքացուցիչի Ջեռուցման համակարգը իրականացնել պոլիպրոպիլենե խողովակերով: միջոցով:

ՕԴԱՓՈԽՈՒԹՅ ՈՒՆ.-Բնակարաններխան հանգույցներից և խոհանոցներից օդի արտածումը բնական է: 16-րդ հարկում եղած բոլոր սան, հանգույցներից օդը արտածվում է առանցքային օդամուղների միջոցով, ամառային ռեժիմում օդի քարշը ապահովելու համար: Բոլոր օդատարները հորանների միջով բարձրացվում են մինչև 4.5 մ: Բոլոր սան. հանգույցների և խոհանոցների հորանների վրա վերևում նախատեսվել են դեֆլեկտորներ: Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ ավտոկայանատեղից: Արտածումը կատարվում է Ա.Հ-1-Ա.Հ-6 արտածման համակարգի միջոցով: Օդահեռացումը կատարվում է երկու զոննաներից վերևի և ներքևի: Հարկավոր է նախատեսել CO գազի բաղադրությունը չափող ցուցիչ, որի ազդանշանի դեպքում կաշխատի արտածման օդամուղը: Ն.Հ-1-Ն.Հ-6 ներածման համակարգերի միջոցով ապահովվում է մաքուր օդի մուտք ավտոկայանատեղերին, իսկ Դ.Հ-1-Դ.Հ-6 դիմհար համակարգերի միջոցով կատարվում է հրդեհի դեպքում ծխահեռացմարը նպաստող օդի դիմհար: Շենքերի տանիքում տեղադրված են արտածման և ծխահեռացման համակարգեր -1, -2 հարկերի ավտոկայանատեղերից օդի արտածման և ծխահեռացման համար: Օդամուղները տեղադրված են տանիքի վրա:

ԾԽԱՀԵՌԱՑՈՒՄ.- Նախատեսված է ծխահեռացում բնակելի հարկերի միջանցքներից, իսկ Դ.Հ-7-Դ.Հ-9 համակարգերի միջոցով կատարվում է օդի դիմհար վերելակների հորաններին, բնակելի հարկերի միջանցքներին դիմհարը նախատեսվել է միջանցքներից էլեկտրաշարժաբերով կափույրների միջոցով: Ծխահեռացման օդատարները տեղադրված են տանիքների վրա: Ծխահեռացման հորանների մեջով անցնող ծխատարները ջերմամեկուսացվում են 5սմ հաստությամբ բազալտե մանրաթելային ջերմամեկուսիչներով: Ծխահեռացման օդատարները պետք է ապահովված լինի 1E160 հրակայունության ծխատարով: Դիմհար համակարգը միացվում է ծխահեռացման համակարգի

միացումից 5վրկ հետո: Արտածման օդատարները մոնտաժվում են 6=0.7մմ հաստության ցինկապատ պողպատից, իսկ ծխահեռացման ծխատարները 6= 0.8-1.9մմ հաստության սև մետաղով կցաշուրթային միացմամբ: Հասարակական տարածքի տեխնոլոգիական առաջադրանք չլինելու պատճառով, ջեռուցման ու օդորակման համար պահանջվող ծախսերը նշված են հատակագծերի վրա: Պունկտիրով նշված են հորանների տեղը, որոնք կարող են օգտագործվել օդափոխության համար տեխնոլոգիական առաջադրանք ունենալուց հետո: Նախագծում ցույց է տրված օդի արտածման հնարավոր տարբերակ:

### 1.5.7 *Էներգախնայողության միջոցառումներ*

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Օդատաքացուցիչների և օդասառեցուցիչների հզորության ավտոմատ կարգավորում .
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելության փոքր տոկոս ունեցող պատուհաններ
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում

### 1.5.8 *Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր*

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարման ցանցը նախատեսվում է միացնել գոյություն ունեցող ջրագծին, համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանների /կցված Հավելվածներ բաժնում/, ցանցին միացման տեղում նախատեսված է փական:

**Ջրամատակարարում՝**
Մաքրավանի ջրամբար, Հատիսի փողոց
Գործող խողովակի տրամագիծ, ճնշումը, տեսակե՝ ջրաղբյուր
**Ջրահեռացում՝**
Հատիսի փողոց, D=500մմ կոյուղատար

ՀՀ Կոտայքի Մարզ,Ք.Աբովյան,4-րդ միկրոշրջան վարչական շրջան, հ. 15/10 բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման և ՋԿ մասի աշխատանքային նախագիծը մշակված է ըստ
ա) ճարտարապետա - շինարարական գծագրերի ,
բ) Տեղանքի գեոդեզիական հանույթի ,
գ) Շենքը ջրով և կոյուղիով ապահովելու տեխնիկական պայմանների ,
դ) Տեղանքի ինժեներա - երկրաբանական ուսումնասիրության .
ՋԿ մասի նախագծում նախատեսվում են հետևյալ համակարգերը՝
Սառը ջրամատակարարում ,
Կենցաղային կոյուղի .
Ջրահեռացման համակարգ
Այս համակարգերը միացվում են առկա համապատասխան ցանցերին: Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014

Սառը ջրամատակարարում և ներքին հրդեհաշիջում Շենքի ջրամատակարաման համակարգը փակուղային է,այն շենքի ներքին բաշխիչ ցանցին տրվում է -3.90 հիշում նախատեսվող մղման պոմպային կայանքների միջոցով:Նախատեսված է 120մխ ծավալով ջրի ռեզերվուար հրդեհաշիջմանա անձեռնամխելի պաշար :Հրշեջ ծորակների վրա տեղադրվում են տափողակներ մինչև +30.90 նիշը,քանի որ հրշեջ ծորակի մետ ճնշումը չպետք է գերազանցի 40 մետրը,իրականացվու է նաև ինքնաշխատ սպրինկլերային հրդեհաշիջման համակարգ: Օգտագործվող խողովակների, սարքերի և սարքավորումների աշխատանքային ճնշումը 10.0 մթն (1.0 ՄՊա) է: Մուտքագծի վրա նախատեսվում է ջրաչափական հանգույց: Խմելու ջրի կանգնակի վրա, կանգնակներից սնվող բոլոր ճյուղերի, ինչպես նաև զուգարանակոնքը սնուցող ջրամատակարարման խողովակի վրա նախատեսվում են փականներ: Շենքիի ներքին սառը ջրամատակարարման ցանցը իրականացվում է պոլիպրոպիլենային de20-25 մմ, և պողպատե 57-150 մմ տրամաչափի խողովակներով:

Կոյուղի և Ջրահեռացում

Ջրահեռացուման, կոյուղուն ներքին ցանցը իրականացված է de50-200 - մմ տրամաչափի կոյուղու պոլիէթիլենե խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով: Ջրահեռացման կանգնակի վրա նախատեսված են ստուգիչներ: Կոյուղու թողարկները պոլիէթիլենե խողովակներով միացվում են կոյուղու բակային ցանցին:

### 1.5.9 *Էլեկտրամատակարարում*

Ք. Աբովյան 4-րդ մ/շ թիվ 18/10 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի 0,4 էլ մատակարարումը կիրականացվի հետևյալ կերպ՝

1. «Էլար-2» 35-10 ա/կ-ի բջիջ 20, 21-ից սնվող, քկ 4-ի 10 կՎ երկու հատոններից կկառուցվի մոտավորապես 300 մ 10 կՎ ստորգետնյա մալուխագիծ
2. Կկառուցվի պահանջված հզորությանը համապատասխան ՏԵ
3. Կառուցվող ՏԵ-ի 0,4 կՎ բաշխիչ վահաններից կկառուցվի 0,4 կՎ ստորգետնյա մալուխագծեր մուտքով կառուցապատվող շենք:
4. Կառուցվող 0,4 կՎ մալուխագծերի վերջում, կառուցապատվող շենքի մուտքում կտեղադրվեն 0,4 կՎ ենթակայաններ:
5. Հաշվիչ սարքերը կտեղադրվեն արկղերի մեջ շենքի մուտքում տեղադրվող 2,4 կՎ ենթակայաններին կից:

### 1.5.10 *Աղմուկ և թրթռում:*

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում հողային աշխատանքների իրականացնելիս 2 էքսկավատորներ և 1 կռունկ, իսկ համալիրի կառուցման ընթացքում 3 ամրակապովի և մեկ ավտոմոբիլային կռունկ: Հաշվարկը առված է ենթադրելով, որ այս շին.տեխնիկան շահագործվում միաժամանակ յուրաքանչյուր շինարարության փուլում՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left( \frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

<u>Հողային աշխատանքների փուլ</u>

**Տրված տվյալներ**

- Էքսկավատորի CAT 320 ձայնային հզորություն ($L_{w1}$)՝ 99 դԲ
- Կռունկ LIEBHERR LTM 1100-4.2 ձայնային հզորություն ($L_{w2}$)՝ 100 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

**Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ**

- **χ = 1** (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- **Φ = 1** (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- **Ω = 2π** (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- **k = 1** (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- **B = 200** (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Էքսկավատորի աղմուկի մակարդակ՝ $L_{w1} = 99 + 10 * \log_{10} ((1 *1/(2/\pi*50^2)+4/1*200) = 99+10*(-16.98) =82.02$ դԲ

- Կռունկի աղմուկի մակարդակ՝ $L_{w2}$ = 100 + 10 * $\log_{10}$ ((1 *1/(2/π*$50^2$)+4/1*200) = 100+10*(-16.98) =83.02 դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$LA_{էկվ}$ = 10 * $\log_{10}$( 2*10^{82.02/10} + 10^{83.02/10}) = 10 * $\log_{10}$ ( 2*10^{8.202} + 10^{8.302}) = 87.15 դԲ

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 87.15 դԲ:

<u>Համալիրի կառուցման փուլ</u>

**Տրված տվյալներ**

- Կռունկ QTZ 160 ձայնային հզորություն ($L_{w1}$)՝ 105 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

**Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ**

- **χ = 1** (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- **Φ = 1** (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- **Ω = 2π** (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- **k = 1** (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- **B = 200** (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ $մ^2$)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Կռունկ աղմուկի մակարդակ՝ $L_{w1}$ = 105 + 10 * $\log_{10}$ ((1 *1/(2/π*$50^2$)+4/1*200) = 105+10*(-16.98) =88.02 դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$LA_{էկվ}$ = 10 * $\log_{10}$( 3*10^{88.02/10}) = 10 * $\log_{10}$ ( 3*10^{8.802}) = 92.79 դԲ

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երեք կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 92.79 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850կգ/$մ^2$:

Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$L_{աղ}$ = 23*lg*$m_{է}$ - 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/$մ^3$

$L_{աղ}$ = 13*lg*$m_{է}$ - 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/$մ^3$

Որտեղ $m_{է}$ = K*m - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/$մ^3$,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/$մ^3$

$m_{է}$ = 7850 * 1=7850

$L_{աղ}$= 23*lg*$m_{է}$ - 13 = 23*lg(7850) – 13 = 23*3.894 – 10 = 89.562–10 = 79.56 դԲ

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

<u>Հողային աշխատանքների փուլ</u>

$LA_{տար}$ = $LA_{էկվ}$ – $L_{աղ}$ = 87.15 – 79.56 = 7.59 դԲ

Համալիրի կառուցման փուլ

$LA_{տար} = LA_{էկվ} – L_{աղ}$ = 92.79 – 79.56 = 13.23 դԲ

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը հողային աշխատանքների փուլում կկազմի 7.59 դԲ, իսկ համալիրի կառուցման փուլում՝ 13.23 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

**Թրթռում**

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապանության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

| Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց | Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով | | | |
|---|---|---|---|---|
| | Թրթռման արագացում | | Թրթռման արագություն | |
| | մ/վրկ2 .10-3 | դԲ | մ/վ .10-3 | դԲ |
| 2 | 10.0 | 80 | 0.79 | 84 |
| 4 | 11.0 | 81 | 0.45 | 79 |
| 8 | 14.0 | 83 | 0.28 | 75 |
| 16 | 28.0 | 89 | 0.28 | 75 |
| 31.5 | 56.0 | 95 | 0.28 | 75 |
| 63 | 110.0 | 101 | 0.28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները | 10 | 80 | 0.28 | 75 |
| Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ: | | | | |

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1.Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2.Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3.Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2.Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3.Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

## 2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 48 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքների շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երը ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզանական տղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող համալիրի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

**Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են**

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Քանդման աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

## 2.2 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է **48 ամիս**, **4 օրացուցային տարի** :

ԻՏԱ և Բանվորներ առավելագույն քանակը կազմել է **55 մարդ** :

## 2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

| NN | Անվանում | Մակնիշ | Քանակ |
|---|---|---|---|
| 1 | Աշտարակային կցովի վերամբարձ կռունկ | XGT 6515-10S | 1 |
| 2 | Ավտոմոբիլային կռունկ | LIEBHERR LTM 1100-4.2 | 1 |
| 3 | Ավտոկռունկ | КС 55713-6 ГАЛИЧАНИН | 1 |
| 4 | Էքսկավատոր՝ | CAT 325DL(01) , | 3 |
| 5 | Գլդոն | CAT CS 563 | 1 |
| 6 | Շարժական կոմպրեսոր | Comp air C 76 | 1 |
| 8 | Բետոնամղիչներ | 777 DO 01 Mersedes Benz Axor, | 2 |
| 9 | Թրթռիչ մակերեսային էլեկտրական | ИВ-91А | 2 |
| 10 | Թրթռիչ խորքային էլեկտրական | ИВ-102А | 4 |
| 11 | Փոխարկիչ թրթռիչների համար | ИВ-4 | 2 |
| 12 | Դակիչ ձեռքի էլեկտրական | ИЭ-4709А | 6 |
| 13 | Եռակցման սարքեր | WARRIOR 500i CC/CV | 6 |
| 14 | Տոփանիչներ պնևմո և ձեռքի | | 4 |
| 15 | Փոքր մեքենայացման միջոցներ | կոմպլեկտ | 3 |
| 16 | Ավտոինքնաթափ | | ըստ հաշվարկի |
| 17 | Ավտոբետոնախառնիչ | Kamaz 58149 z | ըստ հաշվարկի |

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

## 2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքների ծավալները բերված են երկու շինհրապարակի համար, աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2**

| NN | Աշխատանքների անվանումները | Չափման միավ. | Ծավալը |
|---|---|---|---|
| 1. | Փոսորակների մշակում | մ³ | 32000,0 |
| 2. | Բնահողի տեղափոխում | մ³ | 29500 |
| 3. | Բնահողի հետլիցք | մ³ | 2500,0 |
| 4. | Երկաթբետոնե հիմքեր | մ³ | 2000,0 |
| 5. | Երկաթբետոնե սյուներ | մ³ | 1822,0 |
| 6. | Երկաթբետոնե պարզունակներ | մ³ | 4008,0 |
| 7. | Երկաթբետոնե ծածկեր | մ³ | 6000,0 |
| 8. | Երկաթբետոնե պատեր և դիաֆրագմաներ | մ³ | 3300,0 |
| 9.. | Ամրանավորում | տ | 2500.0 |

***<u>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</u>***

Շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**a)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

**$W_{Ё.ї.}$ = (n x N + $n_1$ x $N_1$) x T,** որտեղ

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

**N**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

**$n_1$**– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 50 մարդ

**$N_1$** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 1440 օր

$W_{խ.տ.}$= (5 x 0.016 + 50 x 0.025) x 1440 = 1915,2 մ³/շին. ժամ. կամ 1.33 մ³/օր:

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

**$U_1$ = $S_1$ x $K_1$ x T x D,** որտեղ՝

**$S_1$** – ջրվող տարածքի մակերեսը, 3955 մ²,

**$K_1$** – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 600

D – ջրցանի քանակե օրեկան, 2 անգամ

**$U_1$** = 3955 x 0.0015 x 600 x 2 =5399,32 մ³/շին. ժամ. կամ 11, 99 մ³/օր

**c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

**$U_2$ = $S_2$ x $K_2$ x T,** որտեղ՝

**$S_1$** – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 հատ,

**$K_1$** – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ³,

**T** –ժամանակահատվածը օրերով, 1440

**$U_2$ =** 10 x 0.14 x 1440 = 2016 մ³/շին. ժամ. կամ 2.1 մ³/օր

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 9330,52 մ³/շին. ժամ:**

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով լիցենզավորված կազմակերպության կողմից:

Խմելու որակի ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, խմելու ջուր վաճառող ընկերությունից, պայմանագրային հիմունքներով:

Եղանակային տեղումներից /արհեստական առվակների միջոցով/ և անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

### 2.5 *Գազամատակարարում*

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի գազամատակարումն կիրականացվի համաձայն Գազպրոմ Արմենիա ՓԲԸ- կողմից տրված տեխնիկական պայմանի:

Բնակելի համալիրի գազամատակարարումը, P= 0.3 ՄՊա ճնշման և Q=0.7125 մ³/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել ԳԲԿ Ակունք սնող DN-200 կողմնատար – գազատարից:

### 2.6 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակայնի և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգուման համար ջրամատակարարումը կիարականացվի ավտոցիստերնով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերման համար կառուցապատող ընկերությունը կդիմի համայնքին: Նախնական հաշվարկով անհրաժեշտ է մոտ 2400մ$^3$ բուսահող: Բուսահողը ձեռքկբերվի ամինջապես կանաչապատման աշխատանքները սկսելուց առաջ, այդ իսկ պատճառով բուսահող պահպանման միջոցառումներ չեն նախատեսվում:

Նախատեսվող ծառատեսակներ՝

Եղևնի՝ 4 հատ
Դեկորատիվ սալոր՝ 23 հատ
Թույա՝ 24 հատ

Սիզամարգ՝ 2402քմ

### 2.6.1 *Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ*

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6$ = 0.006 մ³/մ²

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1$ = **2402.38** մ²,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 2402.38) \times 2 \times 175 = \underline{\mathbf{5044.99}} \text{ մ}^3/\text{տարի}$$

## 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի վարչական տարածքում, 4-րդ Միկրո կոչվող տեղանքում, 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեով: Համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի տարածքում առկա է քանդման ենթակա մանկապարտեզ 1390,47 քմ, անցակետ – 30քմ:

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** հետազոտվող տեղամասը տեղադրված է Կոտայքի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավային մասում, համեմատաբար հարթ տեղանքում: Հարավային ուղղություն ունեցող էռոզիոնա հողմնահարման լանջերի վրա: Տեղամասը հարթ է աննշան թեքությամբ դեպի հարավ: Տեղամասը հյուսիսային և արևելյան կողմերից սահմանափակված է ասֆալտապատ ճանապարհների պաստառներով:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1447.0-1448.0 մետրի սահմաններում:

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

**Շերտ թիվ-1** լիցքային գրունտ չպառկապնդված, խճա-մանրախճային կազմի, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, շինարարական և կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-1.0 մետր: Տեխնածին առաջացումներ:

**Շերտ թիվ-2** կավավազ խճային կարբոնատացած, ցեմենտացած, հազվադեպ բեկորներով, հրաբխային ապարներից և քռեճից, կարբոնատացած փոշենման ավազային լցանյութով մինչև 20%, գրունտը մասամբ(տեղ–տեղ) ցեմենտացած է, գրունտը սակավախոնավ է, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-2.0 մետր: Չորրորդականի հասակի էլյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ:

**Շերտ թիվ-3** խճա-բեկորային գրունտ հրաբխային ապարներից, կավավազային և խարամա-ավազային լցանյութով մինչև 40%, բազալտների բեկորներով, գրունտը միջին խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0-3.0 մետր: Չորրորդականի հասակի էլյուվիալ առաջացումներ

**Շերտ թիվ-4** բազալտ, անդեզիտա-բազալտ, թույլ ծակոտկեն, ճեղքավորված, մեծաբեկորային անջատումներով, խարամա-ավազային գրունտների բներով և ոսպնյակներով, արմատական տեղադրմամբ, միջին ամրության, տարածումը համատարած է, հզորությունը՝ 3.0-14.0 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

**Շերտ թիվ-5** խարամ հրաբխային, ավազա–մոխրային, մասամբ խճա–ավազային կազմի, հազվադեպ բեկորներով, տեղ–տեղ փոշային կազմի, մասամբ կավավազային նյութի պարունակությամբ, գրունտը փոքր խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 4.0-15.0 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

## 9.Եզրակացություններ

1. Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղազննում, հորատանցքերի հորատում, գրունտներից փորձանմուշների ընտրում և փորձարկում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախագծա-հետազոտական կազմակերպությունների կողմից տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:

2. Հետազոտվող տեղամասը տեղադրված է Աբովյան քաղաքի արևելյան եզրամասում, 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեով, թիվ 7 մանկապարտեզի հարավային կողմում:

3. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Կոտայքի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավային մասում, համեմատաբար հարթ տեղանքում: Հարավային ուղղություն ունեցող էռոզիոնա–հողմնահարման լանջերի վրա: Տեղամասը հարթ է աննշան թեքությամբ դեպի հարավ: Տեղամասը հյուսիսային և արևելյան կողմերից սահմանափակված է ասֆալտապատ ճանապարհների պաստառներով:

   Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1447.0-1448.0 մետրի սահմաններում::

   Համաձայն ՀՀՇՆ 22-01-2023 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման Չափավոր տաք կլիմայական գոտու մեջ:

   Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

4. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համա-խմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 25.0 մետր խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 30.0 մետրից խորը:

5. Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքերի վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 25.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 5 շերտեր՝

| | | | |
|---|---|---|---|
| — | լիցքային գրունտներ | — | շերտ թիվ 1 |
| — | կավային գրունտներ | — | շերտ թիվ 2 |
| — | խոշորաբեկորային գրունտներ | — | շերտեր թիվ 3 և 5 |
| — | կիսաժայռային և ժայռային գրունտներ | — | շերտ թիվ 4 |

*Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները տրված են սույն եզրակացության 6-րդ բաժնում:*

6. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ կավավազները (շերտ թիվ 2) և խճային գրունտների լցանյութը ցուցաբերում են ենթաողողամաշման (суффозия) առանձնահատկություններ, ուստի պետք է մշակել բոլոր տեսակի մակերեսային ջրերի կազմակերպված և կանոնավորված ջրհավաք ու ջրհեռ համակարգ դրանց մուտքը հիմնատակեր բացառելու համար:

7. Համաձայն ՀՀՇՆ 20–04 շրջանը և հետազոտվող տեղամասը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ:

8. Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման համար ունի պայմանական բարենպաստ ինժեներա-երկրաբանական և բնակլիմայական պայմաններ:

Ինժեներ-երկրաբան
Գլխավոր մասնագետ՝ Ն. Ալեքսանյան

**<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u>** տարածաշրջանում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը, և նրա ձախակողմյան վտակ Գետառ գետը: Հրազդան գետի ռեժիմն ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով, ինչպես նաև մանր ջրահոսքերով և ջրանցքներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համա խմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք

հորատանցքերով մինչև 30.0 մետր խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 40.0 մետրից խորը:

**Երկրաբանական կառուցվածքը** Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտա բազալտներ, հրաբխային խարամ և մոխիր, հրաբխային ավազներ և այլն, որոնք ծածկված են բերվածքային առաջացումների շերտախմբերով ՝ խոշորա-բեկորային, մասամբ կավային, ավազային գրունտներով: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 30.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ բոլոր գրունտները:

**Ֆիզիկաերկրաբանական** Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

## 3.1 Կլիման

Դիտարկվող շրջանը գտնվում է չոր մերձարևադարձային կլիմայական գոտում: Ուսումնասիրվող շրջանի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ: Եղվարդի սարահարթի կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո: Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ «Եղվարդ» օդերևութաբանական կայանի տվյալների: Ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը – 32.6 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +38.7 °C: Տարեկան տեղումների քանակը 445մմ: Օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը 61: Տվյալները ներկայացված են համաձայն Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024 նորմատիվային փաստաթղթից

*Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը*

| Օդերևութաբ. կայանը | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C° | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Բացարձակ նվազագույն | Բացարձակ առավելագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Եղվարդ | -4,9 | -2,8 | 2,7 | 9,4 | 14,4 | 18,9 | 22,8 | 22,8 | 18,6 | 11,8 | 4,8 | -1,7 | 9,7 | -32,6 | 38,7 |

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 3.2-ում:

***Աղյուսակ 3.2 Օդի հարաբերական խոնավությունը, %***

| Օդերևութաբ. կայանը | Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, % | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | Միջին ամսական | Միջին ամսական ժ. 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական ժ. 15-ին |
| Եղվարդ | 75 | 71 | 65 | 61 | 60 | 53 | 49 | 47 | 49 | 59 | 70 | 76 | 61 | 75 | 66 | 49 | 34 |

Տեղումների բնութագիրը ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

***Աղյուսակ 3.3 Մթնոլորտային տեղումներ***

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Եղվարդ | 35 | 36 | 44 | 60 | 64 | 39 | 26 | 13 | 17 | 40 | 35 | 36 | 445 | 186 | 259 |
| | 30 | 31 | 42 | 40 | 42 | 29 | 53 | 45 | 35 | 39 | 37 | 28 | 53 | | |

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 3.4-ում:

***Աղյուսակ 3.4 Քամու պարամետրերը***

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Ամիսներ | Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը,% | Միջին ամսական արագությունը,մ/վ | Գերակշռող արագությունը հունիս-օգոստոս ամիսներին | Միջին արագությունից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող արագությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային (Հս) | Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ) | Արևել-յան (Արլ) | Հարավ-արևելյան (ՀվԱրլ) | Հարավ (Հվ) | Հարավ-արև մտյան (ՀվԱրմ) | Արև մտյան (Արմ) | Հյուսիս-Արև մտյան (ՀսԱրմ) | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Եղվարդ | Հունվար | 6 | 48 | 11 | 3 | 15 | 6 | 9 | 2 | 40 | 1,1 | ՀսԱրլ | 5,7 | ՀսԱրլ | 1,8 |
| | | 1,7 | 1,8 | 1,7 | 1,5 | 1,7 | 1,9 | 1,8 | 1,7 | | | | | | |
| | Ապրիլ | 5 | 48 | 7 | 3 | 17 | 10 | 8 | 2 | 23 | 2,6 | | | | |
| | | 3,0 | 3,8 | 2,7 | 2,4 | 2,4 | 2,8 | 2,7 | 2,1 | | | | | | |
| | Հուլիս | 6 | 73 | 4 | 1 | 7 | 4 | 4 | 1 | 11 | 4,8 | | | | |
| | | 4,9 | 5,5 | 4,9 | 1,7 | 3,0 | 2,5 | 3,0 | 1,8 | | | | | | |
| | Հոկտեմ-բեր | 5 | 55 | 6 | 3 | 16 | 8 | 6 | 1 | 31 | 1,9 | | | | |
| | | 2,7 | 3,1 | 2,1 | 1,9 | 1,9 | 2,3 | 1,8 | 2,2 | | | | | | |

## 3.2 Օդային ավազան

Աբովյան քաղաքի օդային ավազանի աղտոտվածությունը ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՀՄԿ ՊՈԱԿ) կողմից: Սակայն, Աբովյան քաղաքում չկան ՀՄԿ ՊՈԱԿ դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Համաձայն ՀՄԿ ՊՈԱԿ -ի ժամանակավոր առաջարկությունների «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները», Աբովյան քաղաքի օդային ավազանում աղտոտող նյութերի ֆոնային աղտոտվածությունը (46900 բնակիչ) կազմել է՝

- ածխածնի օքսիդ՝ 1.1 մգ/մ³,
- ազոտի երկօքսիդ՝ 0.033 մգ/մ³,
- ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³,
- անօրգանական փոշի՝ 0.095 մգ/մ³:

## 3.3 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է:

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը: 2024 թվականի 4-րդ եռամսյանկում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները որոշ դիտակետերի համար ներկայացված են Աղյուսակ 7-ում:

*Աղյուսակ 7. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.*

| Գետ | Դիտակետ | Միջին ամսական ելքեր. մ³/վ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հոկտեմբեր | | | նոյեմբեր | | | դեկտեմբեր | | |
| | | փաստացի | նորմա | % | փաստացի | նորմա | % | փաստացի | նորմա | % |
| Հրազդան | Հրազդան | 2.67 | 3.33 | 80 | 2.20 | 3.44 | 64 | 1.99 | 3.10 | 64 |
| Հրազդան | Արգել | 2.30 | 3.73 | 62 | 2.36 | 3.69 | 64 | 2.15 | 3.13 | 69 |
| Մարմարիկ | Հանքավան | 0.54 | 0.48 | 113 | 0.49 | 0.51 | 96 | 0.50 | 0.45 | 111 |
| Մարմարիկ | Աղավնաձոր | 1.67 | 1.48 | 113 | 1.38 | 1.50 | 92 | 1.25 | 1.33 | 94 |
| Քասախ | Վարդենիս | 0.39 | 0.53 | 74 | 0.53 | 0.55 | 96 | 0.41 | 0.50 | 82 |
| Քասախ | Աշտարակ | 3.46 | 2.75 | 126 | 3.76 | 2.93 | 128 | 2.10 | 2.66 | 79 |

### Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում: Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ հոկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև հատվածում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Աշտարակ քաղաքից ներքև՝ հոկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գեղարոտ գետի ջրի որակը Գեղարոտ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արգել գյուղից ներքև հատվածում՝ հոկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ

գյուղի մոտ, գետաբերանի, Գեղանիստ գյուղի և Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում՝ հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։ Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս)։ Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս)։

### 3.4 Հողերի նկարագիրը

*Հողերը*

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած։

### 3.5 Հողային ռեսուրսներ

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում։ Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 32000 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 2500 մ³ հետլիցք։ Ավելցուկային 29500մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր։ Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ։
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ։ Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով։
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից։

### 3.6 Կենսաբազմազանություն

Տարածաշրջանի կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների,

այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, տաք, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային զոնային:

### 3.6.1 Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա- տարազգի ներկայացուցիչները: Համաձայն նախկինում կատարված հետազոտությունների, այստեղ՝ անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարալվացված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից, որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Իժալեզվազգիներից - OPHIOGLOSSUM YULCATUM (իժալեզու հասարակ), նոճազգիներից - JUNICPERUS EXCELSA (գիհի բազմապտուղի), հովանոցազգիներից - OPOPAHAX PERSICUM (ճավշիր պարսկական), ցախակեռասազգիներից - SAMBUCUS TIGRANII (թանթրվենի Տիգրանի), ազգաթոփազգիներից - EMPERTRUM HERMAPHRODITUM (ակնաթուփ երկսեռ ) Festuca sulkata (շյուղախոտ ), Artemisia austriaca Jack. (բարձրավենյակ), Koeleria nitidula Vel. (կելերիա), Thymus-ի տեսակներ (ուրց), Aegilops cylindrical Host. (այծակն), Scabiosa virgata Grossh. (քոսքսուկ), Achilea micranta M.B. (հազարատերևուկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր Հայաստանում պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ: Տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով նույնպես բացակայում են:

Հողամասը որոշ հատվածներում ներկայացված է ինքնաբերաբար աճած խոտածածկով:

### 3.6.2 Կենդանական աշխարհ

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մոտ 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (կմախքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրատարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Canis lupus (գայլ), Vulpes vulpes L. (աղվես), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել:

## 3.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում տարածաշրջանում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ): Սակայն, այդ ԲՀՊՏ-ները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից զգալի հեռավորության վրա, որտեղ դրանք չեն կարող կրել գործունեության ազդեցությունը: Այսպես մոտակա ԲՀՊՏ-ներն են՝

- «Էրեբունի» արգելոց՝ 15 կմ,
- «Խոսրովի անտառ» արգելոց՝ 19 կմ:

## 3.8 Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

Այս հոդվածը ներկայացնում է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 29 հուշարձան (10 միավոր):

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Ամրոց «Դարանի» | Ք.ա. 3-1 հզ | քաղաքի հվ եզրին, Էլար թաղամասում | 6.2/1 | |
| Բացօթյա կայան Աբովյան-1 | հին քարի դար | | 6.2/2.1 | |
| Բացօթյա կայան Աբովյան-2 | հին քարի դար | | 6.2/2.2 | |
| Բացօթյա կայան Աբովյան-3 | հին քարի դար | | 6.2/2.3 | |
| Բացօթյա կայան Աբովյան-4 | հին քարի դար | | 6.2/2.4 | |
| Բացօթյա կայան Աբովյան-5 | հին քարի դար | | 6.2/2.5 | |
| Բացօթյա կայան Աբովյան-6 | հին քարի դար | | 6.2/2.6 | |
| Բացօթյա կայանների համալիր | հին քարի դար | քաղաքից ամ, դեպի Հատիս լեռն ընկած բլուրների վրա | 6.2/2 | |
| Գերեզմանոց | 20 դ. կես | գազի նախկին գրասենյակի շենքի ետևում, «Դարանի» հանրախանութի մոտ | 6.2/3 | թաղված են երկրորդ աշխարհամարտի ռազմագերիները |
| Գերեզմանոց | 15-20 դդ. | եկեղեցու շուրջը | 6.2/4.2 | |
| Դամբարանադաշտ | Ք.ա. 3-1 հզ | միջնաբերդից ամ | 6.2/1.2 | |
| Դամբարանադաշտ | Ք.ա. 3-1 հզ | ավազահանքի մոտ | 6.2/1.3 | ավերված |
| Եկեղեցի Սբ. Ստեփանոս | 1851 թ. | քաղաքի հվ եզրին | 6.2/4 | |
| Զանգակատուն | 19 դ. | կից է եկեղեցուն հվ-ից | 6.2/4.1 | |
| Թանգարան հայ և ռուս ժողովուրդների բարեկամության | 1978 թ. | | 6.2/6.1 | ճարտ.՝ Ս. Բարխուդարյան |
| Խաչքար | 12-13 դդ. | հվ պատին | 6.2/4.1.1 | |
| Խաչքար | 16-17 դդ. | եկեղեցու բակում | 6.2/4.2.1 | |
| Կոթող | 5-6 դդ. | եկեղեցու բակում | 6.2/4.2.2 | |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|
| Կոթող «Կապույտ խաչ» | | քաղաքի կենտրոնում | 6.2/5 | |
| Հուշահամալիր՝ Հայաստանը Ռուսաստանին միացման 150-ամյակին | 1978 թ. | քաղաքի կենտրոնում | 6.2/6 | ճարտ.՝ Ս. Բարխուդարյան |
| Հուշաղբյուր | 1974 թ. | Էլար թաղամասում | 6.2/7 | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1977 թ. | քաղաքի կենտրոնում | 6.2/8 | |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | | Էլար թաղամասում | 6.2/9 | |
| Հուշարձան Խաչատուր Աբովյանին | 1978 թ. | թանգարանի առջև | 6.2/6.2 | ճարտ.՝ Ս. Բարխուդարյան |
| Հուշարձան Տրդատ Գ Արքային | 1976 թ. | քաղաքի Սարալանջ թաղամասում | 6.2/10 | քանդ.՝ Կ. Նուրիջանյան |
| Միջնաբերդ | Ք.ա. 3-1 հզ | | 6.2/1.1 | |
| Տապանաքար | 1612 թ. | հվ պատի մեջ | 6.2/4.1.2 | արձանագիր |
| Տապանաքար | 16-17 թթ. | հվ պատի մեջ | 6.2/4.1.3 | |
| Տապանաքար | 1689 թ. | | 6.2/4.2.3 | արձանագիր |

## 3.9 Թափոնների կառավարում

Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող տեսակային կազմով վտանգավոր թափոնների առաջացում (բն. նախարարի N430Ն հրամանի հավելված, 25 դեկտեմբեր, 2006թ).

| | Անվանումը | Վտանգավոր-ության դասը | Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի» | Քանակը, |
|---|---|---|---|---|
| 1. | Շինարարական աղբ, նաև քանդման աշխատանքներից | IV | 9120060101004 | 1800 մ³ |
| 2. | Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած կենցաղային | IV | 9120040001 00 4 | 0.7 տ/տարի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | | | |
| 3. | Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող | V | 31401100 08 99 5 | 29500 մ³ |
| 4. | Չտեսակավորված սև մետաղների ջարդոն | IV | 35130100 01 99 5 | 6 մ³ |
| 5. | Չտեսակավորված ալյումինի ջարդոն | V | 35310101 01 99 5 | 2 մ³ |
| 6. | Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը 15% -ից պակաս/ | I | 31402303 01 03 4 | 0.5 մ³ |
| 7. | Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսայրուկներ | V | 35121601 01 99 5 | 0.1տ |

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և նույնպես հեռացվելու է աղբավայր:

Սև և գունավոր մետաղները նույնպես հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Բնակելի շենքի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

## 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին.

հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման համար, սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակություն ունեցող Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի նախագծման ժամանակ կատարել օբյեկտի (շենքի) շինհրապարակի սեյսմիկ պարամետրերի գնահատում՝ գրունտների դինամիկ բնութագրերի և հաշվարկային արագացումների որոշում, ինչպես նաև Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցումն ու շահագործումն իրականացնել համապատասխան ավարտված շինարարական օբյեկտների հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին, ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետի, Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իգ» պարբերության, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթների) պարտադիր պահանջներին:»:

### 4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- քանդման աշսհխատանքներ
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

### 4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- քանդման աշխատանքներ

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

### 4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

#### 4.3.1 *Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.

2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.

3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.

5) հողման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.

6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

8) պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ:

#### 4.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- եղանակային տեղումների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Պարզարանը կնախատեսվի շինարարական հրապարակի տարածքում: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Շինհրապարակում բետոն մատակարարող մեքենաների և բետոնամղիչի համար օգտագործվող բետոնաջրերի համար նախատեսված է հատուկ հավաքման վայր /պարզարան/: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

### 4.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Շինարարական հրապարակում աշխատող ծանր տեխնիկայի /վերամբարձ կռունք, էքսկավատոր/ վառելիքի լիցքավորումն իրականացնել հատուկ նախատեսված տեխնիկայի օգնությամբ /պոմպ/, ինչը կբացառի հողային ռեսուրսների աղտոտումը:
- Ծանր տեխնիկայի սպասարկումը իրականացնել շինհրապարակից դուրս սպասարկման կետերում, քանի որ շինհրապարակում բացակայում են համապատասխան պայմաններ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

### 4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը*

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ*

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

### 4.3.6 *Աղմուկ և թրթռում*

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- շինհրապարակում աղմկահարույց աշխատանքների ընթացքում, որպես պաշտպանիչ միջոցառում աղմկահարույց աշխատանքների ժամանակ անձնակազմին տրամադրել ականջակալներ

### 4.3.7 *Թափոնների կառավարում*

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Բացառել տարածքում թափոնների բաց այրումը
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելուընթացակարգերը;

- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը ավազով կամ մանրախիճով, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման ընթացքում աառաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

### 4.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

## 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս» («Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդված, 4-րդ կետ), որը նպատակ է հետապնդում կանխարգելել փոշեառաջացումը և իրականացնել
3. փոշենստեցումՕգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
5. Կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ կարմիր գրքային տեսակներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել համապատասխան լիազոր մարմնին

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարաության ընթացքում 1490 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

| Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ | | |
|---|---|---|
| Տարածքի ջրցան փոշեզոյացումը կանխելու նպատակով | | 650000 |
| Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ; | 12x40000 | 480000 |
| Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: | 12x30000 | 360000 |
| Ամբողջ շինարարության համար | | 1490000 |

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|---|---|---|
| Ընդհանուր դրույթներ | Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն | (a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ<br>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել<br>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:<br>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)<br>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: |
| Շինարարական աշխատանքներ | Օդի որակ | (f) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.<br>(g) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.<br>(h) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.<br>(i) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները<br>(j) հողման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.<br>(k) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.<br>(l) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:<br>(m) պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգարում:<br>(n) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ : |
| | Աղմուկ և թռթռուն | (a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում |

| | | |
|---|---|---|
| | | (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:<br>(c) Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում<br>(d) Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,<br>(e) Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,<br>(f) Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:<br>(g) Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; |
| | Թափոնների կառավարում | (a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>(c) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն<br>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել |
| Կեղտաջրերի հեռացում | Ջրի որակ | (a) Շինարարական անձնակազմը կօգտվի շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններց, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն<br>(b) տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:<br>(c) ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,<br>(d) անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակում, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:<br>(e) Շինհրապարակում բետոն մատակարարող մեքենաների և բետոնամղիչի համար օգտագործվող բետոնաջրերի համար նախատեսված է հատուկ հավաքման վայր /պարզարան/: Պարզարանում տեղի է |

| | | |
|---|---|---|
| | | ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: |
| Հետիոտների և երթևեկության ապահովություն | Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ | (f) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.<br>(g) պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ<br>(h) Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:<br>(i) Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:<br>(j) Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար.<br>(k) Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում |
| Տարածքի բարեկարգում/<br><br>կանա չապատում | | (l) կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;<br>(m) ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար |

| | | |
|---|---|---|
| Թափոնների կառավարում | Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;<br><br>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով<br><br>հնարավոր է վտանգավոր նյութերի<br><br>թափանցում հողի մեջ | (n) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>(o) շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>(p) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>(q) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն<br>(r) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել<br>(s) Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով<br>(t) վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը<br>(u) Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;<br>(v) Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը<br>(w) հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար; |

## ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

| Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Որտեղ իրականացնել | Ինչպես իրականացնել | Ժամանակամիջոց | Կատարող |
|---|---|---|---|---|---|
| Շինանյութերի մատակարարում | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից | Մատակակարի հիմնարկում կամ պահեստում | Փաստաթղթերի ստուգում | Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում | Կապալառու |
| Օդի որակի հսկում | - ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.<br>- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.<br>- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.<br>- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն | Շինհրապարակ | Գործընթացների գործունեության ստուգում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.<br>- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.<br>- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.<br>- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:<br>- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:<br>- շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ: | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ | - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում<br>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ<br>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում | - Շինհրապարակ<br>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ | Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու |
| Աղմուկի մակարդակի հսկում | - Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում<br>- Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:<br>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում<br>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,<br>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,<br>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:<br>- Անհարաժեշտ է բացառել անսարք | Շինհրապարակ | Գործընթացների գործունեության ստուգում, աղմուկի մակարդակի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; | | | | |
| Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում | - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում<br>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում | Մասնագիտացված ընկերություն | Գործընթացների գործունեության ստուգում | Մեխանիզմների շահագործման ընթացքում | Կապալառու |
| Հողային աշխատանքներ | - Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր | Շինհրապարակ | Գործընթացների ստուգում | Հողային աշխատանքների ընթացքում | Կապալառու |
| Ներտ շինանյութերի գնում | - Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից | Ներտ նյութերի պահեստ | Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում | Մատակարարման ընթացքում | Կապալառու, մատակարար |
| Կենցաղային աղբի առաջացում | - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում<br>- համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ | Շինհրապարակ | Արտաքին զննում | Շինարարության ողջ ընթացքում | Կապալառու, քաղաքապե-տարանի վերահսկողու-թյուն |
| Աշխատանքի անվտանգություն | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով<br>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն | Շինհրապարակ | Ստուգման գործընթացներ | Աշխատանքների ողջ ընթացքում | Կապալառու, պատվիրատու |
| Տարածքի Կանաչապատում, բարեկարգում | Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության<br>Թփերի և այլ բուսականության նորմալ աճ | Կառուցապատվող հողամաս | Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում | Շինարարության Ավարտին | Կապալառու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Վտանգավոր նյու-թերի և թափոնների կառավարում | վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր | Շինհրապարակ | Արտաքին զննում | Շինարարության ընթացքում | Կապալառու, |

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
12. 2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,
13. Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,
14. Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իգ» պարբերություն,
15. Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձև N 1-2

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-0381-24 13.09.2024թ.**

Օբյեկտ **Կառուցում, բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում, գործառնական նշանակության փոփոխություն՝ բնակելի կառուցապատում**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

**նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ IV** նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Կոտայք, համայնք՝ Աբովյան Աբովյան ք. 4-րդ միկրոշրջան 15/10, 07-002-0039-1826**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **«ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴ» ՍՊԸ / 03522963 / ք.Աբովյան,4-րդ մկշ**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը **ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ None None 28032024-07-0054**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **13.09.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Հասարակական կառուցապատման, բնակավայրերի<br>(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը) |
| 2. (*) Հողամասի չափսերը | 0.39559<br>(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա)) |
| 3. Հողամասի առկա վիճակը | Հողամասը ծանրաբեռնված է<br>(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն) |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | ներհամայնքային նշանակության ճանապարհ<br>(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն) |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:<br>(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա) |
| 6. (*) Կից հողամասեր | Հարևանությամբ գտնվող բնակելի շենքեր, մանկապարտեզ, հողամասեր և տարածքներ |

| | |
|---|---|
| | (կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | Առկա չեն |
| | (հուշարձանի անվանումը) |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը |
| | (տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներարանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) |

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | նախագիծը մշակել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով տրված հողատարածքի սահմաններում: |
| | (ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) |
| 9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | 3-5 մետր, առաջին հարկը հասարակական լինելու դեպքում կարմիր գծով |
| 9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | 6 մետր |
| 9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) | մինչև 16 հարկ |
| | սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | ըստ նորմերի |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) | մինչև 40 % |
| 9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%)) | 60 % և ավելի |
| 9.7 այլ պահանջներ | • Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները • Համաձայն Աբովյան համայնքի ավագանու 06.12.2022թ. N 174-Ա որոշման՝ շինությունների արտաքին պատերի համար նախատեսել սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները • Տեղափոխել գոյություն ունեցող ենթակառուցվածքները |
| 10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | մանկապարտեզ, անցակետ պահակակետ |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | Համաձայն նորմերի |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ |

| | |
|---|---|
| 12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում | Համաձայն նորմերի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2 (*) Էլեկտրամատակարարում | Համաձայն նորմերի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | Համաձայն նորմերի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | Համաձայն նորմերի<br>(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | Առկա չեն |
| 12.6. աղբահանություն | համայնքային |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | Կազմակերպել տարածքի ջրահեռացում:<br>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել<br>(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ) |
| 16. Պաշտպանական կառույցներ | Ըստ նախագծի<br>(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներներ | Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժը |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները<br>(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները) |
| 20. Շինարարության կազմակերպում | Ըստ նորմերի<br>(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | 13.09.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,<br>(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) |

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | Համալիր փորձաքննություն հարկավոր է<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | չի պահանջվում<br>(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև. առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | Նորմերի համաձայն<br>(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով) |
| 25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում | • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ<br>(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև. N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահորդողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | չի պահանջվում |

| | |
|---|---|
| 27. Այլ պայմաններ | (Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 նավթելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահորձողի) հետ)<br>• Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին: • Շինությունը նախագծել 22.05.2023թ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան: |

**ՀԱՄԱՑՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

16.09.2024

ՀԱՎԱՄՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 մարտի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. 4-րդ միկրոշրջան 15/10

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26.07.2004թ. հ.2805 առուվաճառքի պայմանագիր, Համայնքի ղեկավարի 12/03/2024թ. թիվ 1229 որոշում

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-002-0039-1826
Մակերեսի չափը (հա)՝ 0.39559
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 28032024-07-0054, գաղտնաբառ՝ NN9XTNJG1DFR**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

**Էջ 1/2**

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 07-002-0039-1826-001 | Մանկապարտեզ | 1390.47 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 07-002-0039-1826-002 | Անցակետ պահակատուն | 30 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՆԱԻՐԻ ԱՍԼԱՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 28032024-07-0054, գաղտնաբառ՝ NN9XTNJG1DFR**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Էջ 2/2

Կադաստրի կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2024 թվականի N 3836

## «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 05-ի N 01/03.1/05455-2024 գրությունը (մուտք՝ 2024 թվականի օգոստոսի 05-ի N Պ-1738) և հաշվի առնելով «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 03-ի N S-1730).

1. Թույլատրել փոփոխելու «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի մարտի 28-ի N 28032024-07-0054 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջան 15/10 հասցեում գտնվող 3955,9 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես բնակելի կառուցապատման հողամաս:
2. «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ բնակելի համալիրի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
3. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
4. «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 445 590 (չորս հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր իննսուն ) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԼԻ-ԱՆԻ ԴԱՅՄՈՆԴՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 09
ք. Աբովյան

Կոտայքի մարզ
Աբովյան համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-002-0039-1826
Մասշտաբ 1: 500




| | Կոորդինատներ | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | 8469403.4050 | 4460912.0910 |
| 2 | 8469391.3682 | 4460917.8426 |
| 3 | 8469367.2856 | 4460930.0233 |
| 4 | 8469343.2030 | 4460942.2040 |
| 5 | 8469336.9670 | 4460945.2965 |
| 6 | 8469323.2159 | 4460917.5105 |
| 7 | 8469329.2519 | 4460914.6023 |
| 8 | 8469324.8163 | 4460905.6397 |
| 9 | 8469409.2308 | 4460864.9686 |
| 10 | 8469426.0892 | 4460901.5807 |
| 11 | 8469407.7330 | 4460910.0330 |

VEOLIA

Ջուր

«Լի-Անի Դայմոնդս» ՍՊԸ
1/ա Խաչատուր Համբարձումյանին
/հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 66ա/

«21» 05 2024թ.

N ՎՋ/ 18983

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Համբարձումյան,

Ի պատասխան Ձեր դիմումի՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ՎՋ2145/2024 ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի առնվազն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով ներկայացնել ընկերության շահագործման համապատասխան տնօրինություն ք. Աշտարակ, Արարատյան 70 հասցեով:
Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:
Հողային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:
Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևտրային հաշվառքի սարք տեղակայելու և Ձեզ հետ Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:
Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետությանն անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
*Առդիր՝ 2 թերթ:*

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն
Ս. Շահինյան

Պատասխանատու՝
Լ. Բաբեյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 18983
«21» 05 2024թ.

ՀՀ, ք. Երևան, 0025,Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 0025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: am.water.office.all@veolia.com
Web site: www.veolia.am

VEOLIA
Ջուր

«Հաստատում եմ»
Արտաքինտեխնիկական բաժնի պետ՝
_________Ա.Մարտիրոսյան
«17» ____05____ 2024թ.

02655115

# Տեխնիկական պայման ՎՋ 2145 /2024

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման նախագծման)

Մ. Կոտայք, Ք. Աբովյան,4-րդ միկրոշրջան 15/10 — /Տարածքի հասցե/
«Լի-Անի Դայմոնդս» ՍՊԸ — /Անուն, ազգանուն/
099112606 — /Հեռախոսահամար/

1304 410958

| Համակարգ | Ջրամատակարարում | Ջրահեռացում | Հրդեհաշիջում |
|---|---|---|---|
| Կոմունիկացիայի գտնվելու վայրը | Մաքրավանի ջրաղբյուր | Հատիսի փողոց | |
| Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը | Ջրաղբյուր | d=500մմ | |
| Միացման կետը | Մաքրավանի ջրաղբյուրից | Հատիսի փողոցով անցնող կոյուղատարին | |
| Միացման տրամագիծը | Համաձայն նախագծի | | |
| Ջրաչափի տրամագիծը | | | |
| Այլ պահանջներ | Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր | Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր | Տես * կետը |
| Ջրամատակարարման գրաֆիկը | Շուրջօրյա | | |

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ:

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին: Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին:

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը նախատեսել համաձայն ՀՀՇՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ. թիվ 1025 որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Ջրառ ծառայության պետ՝ Կ.Ջաքարյան

Տեխ. պայմանների մասնագետ՝ Հ.Սարգսյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՓԲԸ
«ԳԵՂԱՄԱ» մասնաճյուղ
«ԱԲՈՎՅԱՆ» ՇԷՑ

ЗАО "ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ"
филиал "ГЕГАМА"
РЭС „АБОВЯН"

"ELECTRIC NETWORKS OF ARMENIA" CJSC
"GEGAMA" Branch
REGIONAL ELECTRIC NETWORKS OF "ABOVIAN

e-mail Abovyan_elnet@ena.am

N 165
«30» 09 2024թ

ՀՀ Կոտայքի մարզ
Աբովյան համայնք
Ք Աբովյան 4-րդ մ/2 թիվ
15/10 «Լի-Անի Դայմոնդս»
ՍՊԸ տնօրեն՝ Վիտալի
Վլադիմիրի
Եպիսկոպոսյանին

Ք. Աբովյան 4-րդ մ/2 թիվ 15/10 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի 0,4 էլ մատակարարումը կիրականացվի հետևյալ կերպ՝

1. «Էլար-2» 35/10 և/կ-ի բջիջ 20; 21-ից սնվող, բ/կ 4-ի 10 կՎ երկու հատուցերից կկառուցվի մոտավորապես 300 մ 10 կՎ ստորգետնյա մալուխագիծ;
2. Կկառուցվի պահանջված հզորությանը համապատասխան ՏԵ;
3. Կառուցվող ՏԵ-ի 0,4 կՎ բաշխիչ վահանակներից կկառուցվի 0,4 կՎ ստորգետնյա մալուխագծեր մուտքով կառուցապատվող շենք;
4. Կառուցվող 0,4 կՎ մալուխագծերի վերջում, կառուցապատվող շենքի մուտքում կտեղադրվեն 0,4 կՎ ենթակայաններ;
5. Հաշվիչ սարքերը կտեղադրվեն արկղերի մեջ շենքի մուտքում տեղադրվող 0,4 կՎ ենթակայաններին կից;

Նշված աշխատանքները կիրականացվեն միացման պայմանների ձևակերպելուց և սահմանված միացման վճարի վճարելուց հետո:

«Աբովյան» ՇԷՑ-ի պետ՝ Ս. Սարգսյան

Կատարող՝ Ս.Բաղդասարյան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ՏՐԱՆՍԳԱԶ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ-
ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«25» _____ 2024թ.

# ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(գազափոխադրման ցանցից)

թիվ. 133 25.09.2024թ.

Պատվիրատու՝ «Լի-Անի Դայմոնդս» ՍՊԸ (տնօրենի ժ/պ Վիտալի Եպիսկոպոսյանի լ/ա՝ Խաչատուր Համբարձումյան)
*(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի Ա.Ա.Հ)*

Տեխնիկական պայմանների տրամադրման հիմքերը – Պատվիրատուի դիմումը: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 24.09.2024թ. №Ս/57/41222-2024
*(դիմումի գրանցման № և ամսաթիվը)*

Շինարարության տեղը և հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Աբովյան քաղաք, 4 միկրոշրջան թիվ 15/10 (կադաստրային ծածկագիր՝ 07-002-0039-1826):

Բնական գազի սպառման պահանջվող ծավալները 0.7125 հազ. մ³/ժամ
*(առավելագույն ժամային ծախսը)*

Գազամատակարարման համար պահանջվող գազի ճնշումը 0.3 (3) ՄՊա (կգուժ/սմ²)
*(գազի առավելագույն ճնշումը)*

Միացման կետում գործող գազատարի (կամ ԳԲԿ-ի) անվանումը Ակունք ԳԲԿ-ն սնող Dա-200մմ տրամագծով կողմնատար-գազատար:
*(մայրուղային գազատար, կողմնատար-գազատար, ԳԲԿ, այլ կազմակերպություններին պատկանող գազատարներ, ԳԲԿ-ներ)*

Օբյեկտի շինարարության պլանավորված ժամանակահատվածը՝ սկիզբը - ավարտը -

Գազափոխադրման ցանցին միանալու տեխնիկական պայմանները՝

Ներմիացման կետ է հանդիսանում Ակունք ԳԲԿ-ն սնող Dա-200 մմ տրամագծով կողմնատար-գազատարի մոտավորապես 0,43կմ:
*(հանգույցի տեխնիկական բնութագրերը)*

Գազի ճնշումները ներմիացման կետում:

- նախագծային 5.5 (55) ՄՊա (կգուժ/սմ²),
- փաստացի 1.4-1.7 (14-17) ՄՊա (կգուժ/սմ²)

Ներմիացման կետում խողովակի և մեկուսիչ շերտի տեխնիկական բնութագրերը պողպատե խողովակ D=219x5մմ, մեկուսիչ շերտը՝ ժապավենային

*Ներմիացման տեղանքային գծապատկերը*



*Տեխնիկական պահանջներ՝*

1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել տեխնիկական պայմանների ամբողջական պահանջներով:
2. Տեխնիկական պայմաններից շեղումները համաձայնեցնել «Տրանսգազ» ՍՊԸ-ի հետ:
3. Նախագիծը պետք է համաձայնեցվի շահագործող կազմակերպության հետ:
4. Նախագծի մեջ նախատեսել գազատարի պաշտպանիչ միջոցներ՝ (պասիվ և ակտիվ պաշտպանության) նշելով մեկուսիչ նյութերի տեսակները և օգտագործվող նյութեր-սարքավորումների սերտիֆիկատները:
5. Կատարել գազատարի (ԳԲԿ-ի) կապակցումը տեղանքի հետ:
6. Նախատեսել միայն գործարանային արտադրության ժամանակակից սարքավորումներ:
7. Նախագիծը համաձայնեցնել պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի և անհրաժեշտության դեպքում այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
8. Նախագծերին տալ էսթետիկական ձևավորում:
9. Նախագծային, շինմոնտաժային և կարգաբերման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից;
10. Մինչ շինարարությունը սկսելը նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ենթակա են փորձաքննության:
11. Շինարարության ավարտից հետո ՆՆՓ-ի 2 օրինակ հանձնել շահագործող կազմակերպությանը:
12. Գազատարի պահպանման գոտիները հաշվարկել համաձայն ՀՀ Կառավարության 16 հուլիսի 2015թ. թիվ 787-Ն, իսկ նվազագույն հեռավորությունները՝ ՀՀ Կառավարության 21 ապրիլի 2023թ. №584 որոշումների:
13. Առնտրային հաշվառքի սարքերը (գազահաշվիչները) պետք է համալրված լինեն գազի ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչով:
14. Հաշվառման հանգույցը նախատեսել առավելագույն և նվազագույն ծախսերի հաշվառման պայմանով:
15. Նախագծով նախատեսված սարք-սարքավորումները պետք է ունենան համապատասխանության սերտիֆիկատ և շահագործման տեխնիկական փաստաթղթեր;

Հատուկ պահանջներ՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հիմնական պահանջներ՝

1. Կառուցել համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան, ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար և թաղամասը սնող միջին ճնշման գազատար:

2. Գազատարի տեղադրումը նախատեսել ստորգետնյա
(տեղադրման եղանակը-ստորգետնյա, վերգետնյա)
պողպատե խողովակից, իսկ ավտոմոբիլային, երկաթգծային ճանապարհների և ջրային արգելքների անցումները նախատեսել ստորգետնյա
(ստորգետնյա, վերգետնյա)
Արհեստական արգելքների անցման մեթոդները նախապես համաձայնեցնել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:
3. Նախագծով նախատեսել և տեղադրել նոր, գործարանային արտադրության ժամանակակից սարքավորումներ, համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան (ԳԲԿ);
4. Շինարարության ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուի կողմից տեխնիկական վերահսկողություն կամ կնքել պայմանագիր այլ կազմակերպությունների հետ այն իրականացնելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում նախագծային կազմակերպության միջոցով ապահովել հեղինակային հսկողություն:
5. Գազատարի հետ արհեստական արգելքների և ինժեներական հաղորդակցուղիների հատման տեղերում, ինչպես նաև անցումը նրանց պահպանման գոտիներով, անհրաժեշտ է ստանալ տեխնիկական պայմաններ այն շահագործող կազմակերպությունների կողմից:
6. Կառուցապատման ոլորտում իրավասու մարմնի լիազորություններով պայմանավորված ճարտարապետահատակագծային առաջադրանքը ձևավորել տեղադիրքային առումով նույն ուղղությամբ տեղաբաշխված կառուցապատողների կողմից նախատեսվող գազաֆիկացման աշխատանքների համակարգմամբ, որի դեպքում քաղաքաշինական և տեխնիկական պահանջների ընդհանուր լուծմամբ կապահովվի գազաբաշխիչ կայանի ընտրությունը և մեկ ուղեգծով գազատարի կառուցումը համաֆինանսավորման սկզբունքով:

Տեխնիկական պայմանների գործողության ժամկետը՝ մինչև 25.09.2025թ.

Տեխնիկական պայմանները կազմեց՝

«Տրանսգազ» ՍՊԸ ԳՀՇ և Ս բաժնի գլխ. մասնագետ _____Ա.Գրիգորյան

Համաձայնեցված է՝

«Տրանսգազ» ՍՊԸ ԳՀՇ և Ս բաժնի պետ_____Ա. Քոչարյան